ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 88-ա/ք «01» փետրվարի 2013թ.

ԵՐԵՎԱՆԻ <<ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ>> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ <<0515>>, <<2203>>, <<2304>>, <2311>>, <<2809>> ԵՎ <<2908>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 21.07.2006թ. <<Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին>> N 638-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը և Երևանի <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրի տնօրենի 2013 թվականի հունվարի 23-ի N 13-01-014 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Երևանի <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրի 2012-2013 ուսումնական տարվա <<0515>>, <<2203>>, <<2304>, <<2311>>, <<2809>> և <<2908>> մասնագիտությունների պետական որակավորող հանձնաժողովների նախագահներ նշանակել.

- Ռուբեն Արևշատյանին՝ <<Հայաստանի արվեստի քննադատների միջազգային ասոցիացիայի>> անդամ, քանդակագործ-արվեստաբան՝ <<0515 Զարդակիրառական արվեստ>> մասնագիտության գծով,

- Հայկ Ալեքսանյանին՝ <<Էջմիածին>> համատիրության նախագահ՝ <<2908 Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտության գծով,

- Մարինե Մովսիսյանին՝ <<Սեֆորիա>> գեղեցկության սրահի վարսահարդար, ոճաբան՝ <<2304 Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում>> մասնագիտության գծով,

- Աշոտ Հակոբջանյանին՝ <<Հակոբջան>> ՍՊԸ-ի տնօրեն՝ <<2203 Համակարգիչների շահագործում>> մասնագիտության գծով,

- Սեյրան Հովհաննիսյանին՝ <<Սամսուրամ>> ՍՊԸ-ի փոխտնօրեն՝ <<2311 Հասարակական սնունդ>> մասնագիտության գծով,

- Կարինե Ղարիբյանին՝ <<Փոքր ընտանիք>> ՍՊԸ-ի տնօրեն՝ <<2809 Կարի արտադրության տեխնոլոգիա>> մասնագիտության գծով:

2. Պետական որակավորող հանձնաժողովների նախագահներին՝ պետական որակավորման քննությունների ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում նախարարություն ներկայացնել հաշվետվությունները:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ